ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ

ԵԿԷՔ ԸՆ ԻՄ...

«Եկէ՛ք ինձ մօտ, բոլոր յոգնածներդ ու բեռնաւորուածներդ, եւ ես ձեզ կը հանգստացնեմ»:
(Մատթ. ԺԲ 28)

Նոյեմբերի 22-ին անսովոր աշխուժություն էր տիրում Ս. Գայանե եկեղեցու բակում: Հոգևոր և պետական այրերի, ուսուցիչների ու հավատացյալների հոծ բազմություն էր հավաքվել Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնի նոր մասնաշենքի առջև՝ մասնակցելու հոգևոր-կրթական այդ հաստատության բացման հանդիսությանը:

Բացման արարողությունը նախագահում էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ներկա էին Առաջնորդ Սրբազանները, Մայր Աթոռի միաբանները, Կրոնի գործերի վարչության նախագահ Լ. Սուջյանը, Հայաստանի Ազգային Ժողովի գիտության և կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ Ռ. Պապոյանը, Արմավիրի մարզպան Ս. Հովհաննիսյանը, Էջմիածնի քաղաքապետ Ե. Աղվանյանը և ուրիշ պաշտոնական անձինք:

Կենտրոնի բացման արարողությանը մասնակցում էին տարբեր շրջաններից եկած կրոնի ուսուցիչներ:

Ի վերջո, իր գործունեության հանգրվանը գտավ Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության Կենտրոնը (ՔԴՔԿ), որն սկսել էր գործել դեռևս 1991 թվականից, երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի օրոք:

Կենտրոնի առաջին քայլը եղավ կրոնի ուսուցիչների պատրաստումը՝ ուսուցանելով Աստվածաբանություն, Տոնագիտություն, Հայ Եկեղեցու պատմություն և այլ առարկաներ: Երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսից հայրապետական օրհնանք ստանալով՝ նրանք գործի անցան կիրակնօրյա դպրոցներում և այսօր էլ իրենց առաքելությունը շարունակում են մեր նորընտիր Գարեգին Ա Հայրապետի հովանավորությամբ:

Կենտրոնի գործունեության անդրանիկ պտուղները եղան կիրակնօրյա դպրոցների բացումը: Թող չափազանցություն չթվա, եթե սկզբի համար (70 տարվա լռությունից հետո) իրական հրաշք համարենք կիրակնօրյա վարժարաններում կազմակերպված հանդիսները նվիրված Հիսուսի Ծննդյանն ու Հարությանը (նաև Տերունի մյուս տոներին), երպարակավ շարականների հնչելը, բարձրածայն աղոթքը: Ամեն մի հանդես իսկական տոնի էր վերածվում: Անսպասելի էր ծնողների հոսքը դեպի հոգևոր վարժարան:

ՔԴՔԿ-ի անսպասելի ձեռնարկումներից մեկը եղավ դասավանդման ծրագրերի պատրաստումը՝ փորձառու ուսուցիչների կողմից: Իսկ դրան հաջորդեց դասագրքերի հրատարակումը:

Կենտրոնի գործունեությունը գնալով ավելի նկատելի դարձավ. Էջմիածնում և Երևանում առաջին հոգևոր օջախները հիմնելուց հետո նա համարձակորեն իր գործը շարունակեց Արմավիրի, Արտաշատի, Ապարանի և Մասիսի շրջաններում՝ ընդգրկելով բազմաթիվ ուսուցիչների:

Կենտրոնը, որ դեռևս աշխատատեղի էլ չուներ, այստեղ-այնտեղ հանգրվանելով, նախանձախնդիր էր իր աշխատանքին. Ավետարանի լույսն ու ջերմությունը տարածում էր Հայոց աշխարհի տարբեր անկյունները: Իսկ այդ լույսն իրենց հոգիներում պահած՝ սերնդե սերունդ են փոխանցում մանուկները: Դրա համար Կենտրոնը, գիտակցելով գործի կարևորությունը, ամենուրեք՝ այլ շրջաններում ևս հիմնեց կիրակնօրյա դպրոցներ, որտեղ մանուկների բերանից աղոթք է հնչում առ Աստված, և հնչում ախորժալուր շարականը:

ՔԴՔԿ-ն շարունակում է գրաղվել ուսուցիչների պատրաստմամբ՝ մոտ ապագայում հանրակրթական դպրոցներում կրոն դասավանդելու նպատակով:

Կենտրոնի տնօրեն Վազգեն վրդ. Միրզախանյանը, որը հանդես եկավ բացման խոսքով, պատմական պահ համարեց մեր օրերում նմանատիպ հաստատության գոյությունը: Մեծ է լինելու Կենտրոնի դերը՝ Ավետարանի խոսքը ժողովրդին հասցնելու և մանուկների հոգևոր պահանջները գոհացնելու գործում: Նա լիահույս է, որ Կենտրոնը կծառայի Եկեղեցու պայծառացման և Աստծու փառքի համար:

Տնօրենն իր երախտագիտության խոսքն ուղղեց Նորին Սրբություն Գարեգին Ա Հայրապետին՝ մեծ աջակցության, հայրական հոգատարության և նոր մասնաշենքի վերակառուցման բարերարության համար. Մայր Աթոռի վարչա-կառավարչությանը

և պաշտոնեությանը, «Էլիտա-ակցիոներ» շինարարական կազմակերպությանը, Հայ Օգնության Ֆոնդին, Երկրագործական ինստիտուտի տնօրինությանը, ԳԴԳՎ-ի աշխատակազմին, բոլորին, ովքեր նպաստել են կենտրոնի կայացմանը:

Հանդիսությանն իր հայրապետական օրհնանքն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նա հայտնեց իր գոհունակությունը, որ էջմիածնում ստեղծվում է նոր հնարավորություն բարոյական աշխատանքի համար՝ հուսալով, որ շենքի բացումից հետո կենտրոնի գործունեությունը ավելի կհոխանա:

«Կրոնը կրոն կդառնա, ապրում և կյանք կդառնա, երբ ուսուցվի ժողովրդին և յուրացվի ժողովրդի կողմից՝ մանուկ հասակից մինչ խոր ծերություն:

Ես անհունորեն երջանիկ եմ, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, դեռևս երջանկահիշատակ իմ նախորդի՝ Վազգեն Ա Կաթողիկոսի կողմից նախաձեռնված, սկզբնավորված և հաստատված Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության կենտրոնին տալիս է նոր թափ, նոր ուժ և ուղղություն ու լայնատարած գործունեության հնարավորություն:

Եթե մեր ժողովրդի կյանքը պիտի փոխվի, ապա այն հոգևոր բնագավառում պիտի փոխվի, իսկ ազգի բարոյական նկարագիրը երևում է հոգևոր արժեքների գնահատման մեջ»:

Վեհափառ Հայրապետը խոսքն ուղղեց *«սիրասուն աշակերտներին»*, որոնց երգած քաղցրալուր շարականների ուղեկցությամբ էր ընթանում՝ ողջ հանդիսությունը: Բոլոր ներկաները հուզված էին՝ մանուկների շուրթերից լսելով *«Ուր դխ լերը»*, *«Հրաշափառը»*, *«Էջմիածինն ի Հօրէն»*, *«Եկեղեցին հայկական»*, *«Հայր մերը»*, *«Մաղթերգը»*, ինչպես նաև ազգային-հայրենասիրական երգեր:

«Նրանց ձայնը ոչ միայն երկինք հասավ, այլև մեր նահատակների ոսկորներին», ասաց Հայրապետը:

Հայոց Հովվապետը չմոռացավ նաև ծնողներին, որոնց հորդորեց. *«Կիրակի օրը մանուկն ու ծնողը պիտի լեցնեն եկեղեցին՝ շնորհիվ քրիստոնեական դաստիարակության»*: Շարունակելով խոսքը, Վեհափառ Հայրապետն ասաց. *«Իմ գնահատանքի խոսքն եմ ուղղում մեր պետության ներկայացուցիչներին, որոնք բաջալերում են մեր ազգային եկեղեցու կրոնական-դաստիարակչական առաքելությունը, որովհետև հավատում եմ, թե իրենք էլ հավատում են, որ առանց բարոյական և հոգևոր արժեքների մի ազգ չի կարող երկար դիմանալ, և դրա մեջ է մեր պետության ակնկալությունը մեր եկեղեցուց: Մենք էլ սպասում ենք, որ մեր պետության ներկայացուցիչները զորավիգ կանգնեն այս սուրբ գործին, ազգակերտ և առողջ գործին հոգևոր և բարոյական հիմքերի վրա»:*

Արարողության ավարտին Վեհափառը, գնահատանքի խոսք ուղղելով նաև վարիչ-տնօրենին, օգնական Հայր Զարեհին և մյուս աշխատակիցներին, հանդիսավոր կերպով բացեց Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության կենտրոնի դռները:

Սուսաննա Մնոյան